Թուրքիայի Հայոց Ամենապատիւ Պատրիարքի և Կենդրոնական Կրօնական Ազգային ժողովի՝ 28 փետրուարի՝ թ. 327։

Նորին Սրբութիւնը Փարիզի Հայկական Միութեան անդամ-դանձապահ պ. Համբարձում Մելիքեանի անցած փետրուարի 2-ի յայտարարութեան վրայ հետևեալն է մակագրել.

«Այն գրութեան մէջ յիշուած երկու հարիւր իննսուն և հինգ ռուբլի (295 ռ.) կանխիկ դրամը և երկու հազար չորս հարիւր ֆրանկ արժողութեամբ վեց հատ տոկոսաբեր թղթերն իւր կտրոններով (1914 թ. յունուար 1-ից մինչև 1946 թ. յունուարի 1-ը) յատկացնում ենք Մայր Աթոռի Հոգևոր ճեմարանին և յանձնելով ս. Էջմիածնի Սինօդին, պատուիրում ենք պահել իբրև դրամագլուխ յանուն Հոգևոր ճեմարանի»։ 11 փետրուարի՝ թ. 215։

ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳՐԵՐԻՑ ՔԱՂՈՒԱԾՆԵՐ

Սինօդը՝ լսելով Վեհափառ Կաթուղիկոսի անցած տարուայ նոյեմբեր 26-ի, № 1834, կոնդակը՝ որոշեց. նոյն կոնդակի պատճէնն ուղարկելով Մայր Աթոռի Դէսպրեան ճեմարանի վարչութեան՝ պատուիրել 1913/1914 ուս. տարում գործադրել ճեմարանի անցեալ 1912/13 ուս. տ. նախահաշիւը՝ վարժոցի վրայ այս տարի աւելի ծախսել 200 ռուբլի և վճարել դպրոցական բաժնի ուսուցիչներից համալսարանաւարտներին 75՝ իսկ ճեմարանաւարտներին 60 ռուբլի դասադին։ 3 փետրուարի՝ թ. 51։

Սինօդը՝ լսելով Մ. Աթոռի Վանական Կառավարութեան զեկուցումը Օշականի վանքապատկան «Դաշտի» աղչայ վարելահողերը վարձով տալու մասին՝ որոշեց. թոյլ տալ Վանական Կառավարութեան յիշեալ «Դաշտի» վարելահողերը տալ Հաջիղարա գիւղացի Տիգրան Մուրադխանեանին կապալով 6 տարի ժամանակով՝ տարեկան 600 ռուբլի

վարձով և այդ մասին կապել նրա հետ նոտարական պայմանագիր 3 փետրուարի թ. 53։

Սինոդը՝ համաձայն Վեհափառ Կաթուղիկոսի անցած յունուարի 30-ի թ. 184, կոնդակի, որոշեց. նախ, Մայր Աթոռի գանձապահ Արտակ վարդապետին՝ Աղէքսանդրոպոլի փոխանորդ կարգուելու պատճառով, արձակել գանձապահի պաշտօնից, նոյն պաշտօնը յանձնել Մ. Աթոռի հիւրընկալ Վրթանէս վարդապետին, իսկ հիւրընկալի պաշտօնը տալ Թադէոս արեգային. երկրորդ՝ կարճել Աղէքսանդրոպոլի Յակոբ քհնյ. Խաչվանքեանի ռոճիկը, որ ստանում էր Հոգևոր Կառավարութեան Նախագահութեան համար, և, երրորդ, արձակել նոյն Խաչվանքեան քահանային Աղէքսանդրոպոլի վանքապատկան կալուածների կառավարչի պաշտօնից և այդ պաշտօնն էլ յանձնել Արտակ վարդապետին։ 3 փետրուարի թ. 54։

Սինոդը՝ Վրաստանի կոնսիստորիայի և Ղազախի գաւառի Օձուն, Մզարթի և Հագուի գիւղերի ծխականների միջնորդութեան համաձայն, որոշեց. թոյլ տալ Օձուն գիւղի՝ Սինոդի վճռով Նաւնաբատի վանքն աքսորուած Ներսէս քահանայ Ծիտանեանին վերադառնալ ապաշխարավայրից և շարունակել քահանայագործութիւնը, բաւական համարելով նրա կրած 4-ամսեայ ապաշխարանքը։ 5 փետրուարի թ. 57։

Սինոդը որոշեց. նախ, Երևանի Նահանգական դատարանի վճռի համաձայն քանդել Սինոդի և Մ. Աթոռի «Ծայլար» հողերի կապալառու Կարապետեանի մէջ կապած պայմանը, յիշեալ հողերը հանել Կարապետեանի տեսչութեան տակից և յանձնել Սինոդին, և, երկրորդ, թողնել Սինոդին Կարապետեանի գրաւականը և պահանջել նրանից յօգուտ Սինոդի 133 ռ. 33 կոպ. դատաստանական ծախք, այլ և, անկախ դրանից, պատուիրել Սինոդի փաստաբանին դատ բանալ յիշեալ Կարապետեանի դէմ և պահանջել նրանից 1913 թ. ապրիլի 1-ից մինչև 1914 թ. չվճարած կապալավարձը 1275 ռուբլի և այն բոլոր վնասները, որ

կրում է Սինօդը Կարապետեանի պայմանագանց լինելու պատճառով։ 7 փետրուարի, թ. 59։

Սինօդը՝ քննութեան առնելով Ստաւրոպոլի Սահակ քահանայ Տէր-Յովհաննիսեանի և Արմաւրի Պետրոս քհնյ. Կուսիկեանի ու Գէորգ քհնյ. Սէֆէրեանի մեղադրական գործը, որոշեց. փոխելով Աստրախանի կոնսիստորիայի վճիռը, յանձնարարել Սահակ քհնյ. Տէր-Յովհաննիսեանին հայ-կաթոլիկի պսակ կատարելու համար, իսկ Պետրոս քհն. Կուսիկեանին և Գէորգ քհնյ. Սէֆէրեանին հայ-կաթոլիկների թաղում կատարելու մէջ ճանաչել անպարտ։ 10 փետրուարի, թ. 66։

Սինօդը՝ լսելով Մ. Աթոռի Վանական Կառավարութեան փետրուարի 12-ի, №30, յայտարարութիւնը, որոշեց. թոյլ տալ նոյն Կառավարութեան Օշականի վանքապատկան «Ղուեր» կոչուած հողերը տալ նոյն գիւղացի Բաղալ Գալստեանին կապալով, 5 տարի ժամանակով և տարեկան 520 ռուբլի վարձով։ 21 փետրուարի, թ. 72։

Սինօդը որոշեց. համաձայն Սինօդի առեանում փետրուարի 19-ին տեղի ունեցած աճրդախօսութեան, Մայր Աթոռի «Բիւլթափա-Խաթունարխ» հողերը տալ Վաղարշապատցի Սմբատ Զաքարեանին կապալով մի տարի ժամանակով 7055 ռուբլի վարձով։ 24 փետր., թ. 78։